ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1
☎ /0322/ 2-32-40
Fax /0322/ 2-07-70

թիվ ________________________

« _____» ______________ 2025 թ.

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ՊԱՏՃԵՆԸ՝ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Ա. ՍԱՔՈՒՆՑԻՆ
Էլ-փոստ՝ nmovsesyan@hcav.am

Ձեր 09.01.2025թ. թիվ ՎԳ/02.2/333-2025 գրությանը.

Հարգելի տիկին Գրիգորյան

Ձեզ եմ ներկայացնում «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 15.01.2025թ. թիվ 020 գրությունը՝ զորակոչային տարիքի քաղաքացի Արտյոմ Բալաբեկյանին անհրաժեշտ հետազոտության իրականացման հետ կապված խնդրի վերաբերյալ:

Առդիր՝ 1 էլ. նյութ:

16/01/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ                    Կ. ԱՇՐԱՖՅԱՆ

կատ. Ռ. Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ**

---

«15» 01 2025թ.

N 020

Հասցե ՀՀ, ք. Վանաձոր, Գարեգին Նժդեհի 2/42
Էլ. Փոստ: vanmedcenter@gmail.com
Հեռ. (0322) 2-02-86

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Կ. ԱՇՐԱՖՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Աշրաֆյան

Ի պատասխան Ձեր 13.01.2024թ-ի թիվ 05/104.6/00236-2025 գրության՝ հայտնում եմ, որ <<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի ախտորոշիչ բաժանմունքում քաղաքացիների թե անհետաձգելի, թե պլանային լաբորատոր և գործիքային հետազոտությունները կատարվում են համապատասխան մասնագետի կողմից բժշկական քարտ բացելուց և գրավոր ուղեգրելուց հետո, որպեսզի ապահովվի հետազոտության ճշգրտությունը և նպատակայնությունը: Զորակոչային տարիքի անձանց ախտորոշիչ հետազոտությունները ևս կատարվում են նույն սկզբունքով:

Զորակոչային տարիքի Արտյոմ Բալաբեկյանը դիմել է ռենտգեն հետազոտության: Վերջինիս առաջարկվել է անցնել համապատասխան բժշկի խորհրդատվություն և ստանալ ռենտգեն հետազոտության կոնկրետ ցուցում, որից նա հրաժարվել է:

«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Մ.Վ.ՀԱԶՐՈՅԱՆ

Կատարող՝ Տ.Հազրոյան